

ՏՆՕՐԷՆ - ԵՍՏՈՒՆԻՍՏՆԵՐ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՄԱՆՈՐԴԱԳՐՈՒՅԻՒՆ

ՏԱՐԵՒՆ 500 ՂՐԸ
ՎԵՑԱՍՍԵԱՑ 250 *
ԵՌԱՍՍԵԱՑ 150 *

Բաժանորդագրութիւնը կ'սկսի
ամեն ամսոյ 1 ին և 45 ին



Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

100 ՓԱՐՍ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԵՒ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

Հինգշաբթի իրիկուն Առաջնորդարանի սրահին մէջ հրաւիրեալ խումբ
բաղումներուն մը տուչեալ խօսեցաւ Պ. Մասունի շտաբի երկու ժամ:

Հոս մտադիր չենք կէտ առ կէտ հետեւելու իր բանախօսութեան, թերթիս
սիւնակներն շատ նեղ կուզան այդպիսի աշխատութեան մը ձեռնարկելու հա-
մար, այլ պիտի ամփոփենք իր բաժնիքը, յաջորդական յօդուածներով անդ-
րադաճելու աստիճաններուն իր շուրջը կարգ մը հարցերու շուրջ, որոնք
հայ ներկայ իրականութեան մէջ կոչուած են մեծ դեր մը խաղալու:

Հայկական ներկայ հանրապետութիւնը մասնաւորապէս և Հայաստանի
ամբողջութիւնն ընդհանրապէս անձամբ աշխարհներ են մեզի արեւմտաքի
մէջ գտնուող, հոն ծնող և ապրող Հայերու համար:

Պ. Մասունի մանրամասնաբար, որքան կարելի է, նկարագրեց Հայաս-
տանի դիրքը, անոր սահմանները, անոնց կարեւորութիւնը և առ այդ պա-
հանջը զինուորական տեսակետով: Անոր սահմաններուն վրայ և անոր մէջ
գտնուող զանազան ցեղերու վրայ տեղեկութիւններ տուաւ և ապա բացատրեց
անտեսական տեսակետներով անոր կարեւորութիւնը:

Ընդարձակօրէն ծանրացաւ հայկական հանրապետութեան և Հայաստանի
տեղագրական, հողային, հանքային տեսակետներով ունեցած առաւելութիւն-
ներուն վրայ և բաժնեց չորս որոշ գոտիներու:

Ա.) Հայաստանի հանրապետութեան մէջ՝ Արաքսի հովիտը ուր ցորենի և
բամպակի, ինչպէս նաև խաղողի առատ բերքեր կրնան արտադրել, ինչպէս
կ'արտադրէին պատերազմէն առաջ և սկսած են նաև այժմ արդիւնաբերուի:

Բ.) Նիւրաբանի հովիտը՝ որը մէջ կ'ընկնէ Բաղրամիտի Արաքսի, Պոլսի, Սեւանի,
Մալազիերայ, Մշոյ գաջար, Ռարբերք և անոր հարաւային մասը, որ նմանապէս
ցորենի մեծ արտադրութիւն մը կրնայ ունենալ, և ապարակներու յարմարա-
գոյն վայրը նկատուած է, հոն հնարուորութիւն կայ նաև շերամարուծութեան
մղում տալու:

Գ.) Վանը իր շրջականերով՝ գաղտնիքով և թիմարի շրջանակը, ուր նմա-
նապէս կրնան զարգանալ այգեգործութիւնն, պտղաբերութիւնն և երկաթագոր-
ծութիւնն իբրև միջոց ճարտարարուեստի մղում տալու:

Դ.) Կրիկիտ, որ բամպակի, ցորենի և պտղաբերութիւն կողմէ կրնայ մրցել
առաջնակարգ հրապարակներու հետ:

Ինչպէս կ'ընթացեն մեր ընթերցողներն, շատ համառօտ գիծերով տւելի
ամփոփում մը ընել կ'իտրծենք, քան ամբողջութիւն մը ներկայել մեր ընթեր-
ցողներուն, թողնելով յաջորդական թիւերու՝ կարեւոր մասերու վրայ աւելի
երկարօրէն ծանրանալու պարագան:

Պ. Մասունի անդրադարձաւ ապա՝ սոսկաբան տեսակետով անմիջապէս
գործի ձեռնարկելու համար, իբրև յարմարագոյն կեդրոն ցոյց տալով Տրա-
պիզոնն որ Հայաստանի ներքնաշխարհի յարմարագոյն նաւահանգիստն կ'հա-
մարուի, ուսկից կարելի է ներածել Բաղրամիտի Արաքսի, Կարս, Երեւան,
Վան, Արաքսի, Պիթիկ և այլ երկրամասերուն մէջ եւրոպական ապրանքներ,
և Միսիսի ուսկից Ատանաի, Սվազի և Ռարբերքի հարաւային մասերուն մէջ
հնարուորութիւն կայ միեւնոյն աշխատութիւններուն:

Ապա անդրադարձաւ Հայաստանի ներքնաշխարհին, որը վրայ գերմանա-
ցիք կարեւոր ուսումնասիրութիւններ հրատարակած են, հետաքրքրելով
Հայաստանի զանազան մասերուն մէջ գտնուող հանքերով, ինչպէս՝ հանքու-
ծուի որ վերջին պատերազմի շրջանին Վանի և Էրզրոմի ինչ ինչ հողամա-
սերուն վրայ զանուած է և օգտագործուած, քարիւղ, երկաթ, արծաթի ու բլա-
թիի և մարմարի հանքերն ամբողջ Տարածան լեռնաշղթային երկայնքը:
Ասկից գատ շէշտեց սա կէտն որ նախապատմական գործերու մէջ, երկրաբա-
նական ինչ ինչ յեղաշրջումներով անհետացած անապին տարածութեամբ ան-
տառներ, ժամանակի ընթացքին մէջ հանքային մեծ հարստութիւններ կ'ներ-
կայեն այսօր և որոնք ցարկ կոչս մնացած են շնորհիւ թուրք կառավարու-
թեան շինիչ և քաղաքակրթիչ յառաջդիմական նկարագրին...

Անդրադարձաւ ցարկ գոյութիւն ունեցող երկաթուղիներու վրայ, Քիւր-
մէթրական մանրամասնութիւններ տւաւ, պատերազմի տարի շինուած ճամ-
բաներ և ապագային տնտեսական և քաղաքական կրկնակ տեսակետներով
ծրագրուելիք երկաթուղիներու կարեւորութիւնն բացատրեց անոնց գլխաւոր
կեդրոնով:

Հողային հարցը ամենէ շահագրգռական հատուածն էր համարելիս բանա-
խօսին նիւթին, որովհետև պէտք չէ երբեք անտեսել թէ՛ մեր երկիրն իր
ընդարձակ արտադրանքներով, շատ աւելի ընդունակ է երկրագործութեան
մղում տալու՝ հիմնելով տիպար ապարակներ, և ոյժ տալով կենդանաբուծու-
թեան:

Բնականաբար ունի յարմարագոյն հողամասեր ճարտարարուեստի ճիւղե-
րուն մղում տալու համար, մանաւանդ գորգաշինութեան՝ որով կրնայ որ
մը մրցել Պարսկաստանի հետ վերջապէս իր երկաթի, ածուխի և քարիւղի

հանքերով, կոչուած է հեղահեղ տարիներու ընթացքին ճարտարարուեստի մէջ
իր արժանի գիրքը գրաւելու:

Պ. Մասունի բացատրեց հայ դրամագլխի կատարելիք մեծ դերը մեր հայ-
րենիքի տնտեսական բարգաւաճման տեսակետով և այն բոլոր ձեռնարկութիւն-
ներն, որոնց առջև ժամանակ չկայ ընկրկելու, եթէ չենք ուզեր որ բոլոր
հիմնական ու կենսական ձեռնարկներն անցնին օտարներու ձեռքը:

Մի առ մի բացատրեց հողային գծուարարչի հարցին համար խորհուած
յարմարագոյն լուծումը, դարձնելով բոլոր հողերն պետական և վարձելով զա-
նաք որոշ պայմանաժամերու հիման վրայ:

Ծանրացաւ ներգաղթի շատ դժուար հարցին վրայ և խորհուրդ տուաւ
որպէսզի այժմէն հաշուեյարդարութեան սկսին երկիր փոխադրուելու պատրաս-
տութիւն տեսնելով և զգացնելով որ այլևս հայերն կարենոր կեդրոններու մէջ
չպիտի կրնան մրցիլ օտար տիրապետութիւններու տակ և ստիպողապէս պիտի
պարտաւորուին իրենց գրամագլխի շահագործումին համար հայրենիք փոխա-
դրուիլ:

Բացատրեց ապա որ այժմ գտնուող կարգ մը կուսակցութիւններու մէջ,
Դաշնակցութիւնն իրրև կեդրոնի կուսակցութիւն կ'ներկայանայ ունենալով
Հայ Հանրապետութեան մէջ մեծամասնութեան քուէն և թէ պարտաւոր եղած
է երկու ուրիշ կուսակցութեանց միջև հաւասարակշռութիւն պահել, մին ժոռ-
ղովրդական, միւսը՝ ծայրային ընկերակցական, Դաշնակցութեան գիրքին փափ-
կութիւնն բացատրելով և միեւնոյն ժամ մտակ ըսելով որ այլևս որ և է դաւա-
զական հարց չըլլալով, ամեն կուսակցութիւններն օրինուար հողի վրայ պար-
տին գործել միակ իտէալի մը ծառայելով:

Ամենէ վերջ զարմանք յայտնեց որ Իգմիրի Հայութիւնն գեռ որոշապէս
ձեռնմուխ է եղած կազմակերպութիւն մը ունենալու, յարաբերութեան մը-
նելու համար Բարիկի հայ պատգամաւորութեան և Երեւանի Հանրապետու-
թեան հետ որպէսզի սկսի ներգաղթի և այլ կենսական հարցերու վրայ իր մաս-
նակցութիւնն ու ծրագրին պատրաստել:

Համերայնութիւնն ըսաւ վերացական բառ մը կ'նկատուի, լուրջօրէն է որ
համաձայնութեան մը յոնգիք, սակարկութեան մը նստիք և ընտրեք զանազան
ուղղութիւններէ մարդիկ, գործի ձեռնարկելու համար:

Ահա իր ընդհանուր գիծերուն մէջ Պ. Մասունիի բանախօսութիւնն, ինչ-
պէս ըսինք անոր յուզած կարեւոր հարցերու վրայ առանձին յոդո՞ւածներով
պիտի արտայայտուինք մեր յաջորդական թիւերով:

Հ. Մ.

ՀՐԱՊԱՐԱԿՍՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎ

Տեղի պիտի ունենայ վաղը, կիր. առաւօտ ժամը 9.30ին, ԲԱՍՏՈՒՆԻ սրահին մէջ

1. Պէտէ Խոյէ Պ. Պ. ՄԱՍՈՒՐԵԱՆԻ

ԱՆԿԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՏՆՈՒՆԴԸ

ԵՒ

ՀԱՅ ԳԱՂԱՌԹՆԵՐՈՒ ԴԵՐԸ

2. Պէտէ Խոյէ Պ. ՍՈՒՐԵԱՆ ՊԱՐԹԵՆԵԱՆ

Նիւթ ունենալով՝

ՕՐՈՒԱՆ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐ

Կր հրաւիրուի հայ երկեսո հասարակութիւնը ճիշտ ժամանակին ներկայ
ըլլալ, և օգտուել այս խիստ շահեկան բանախօսութիւններէն:

Հ. Յ. Դ. ԻԶՄԻՐԻ ԿՕՄԻՏԷ

ՀԱՅԿ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏՂԱՍ ԻՆՉՊԵՍ Է

Երիտասարդ կեանք մը և մաշած
թոքեր...

Շատ ազնիւմ այդ է կործան միակ
վարձքը աշխատաւորի արդար քր-
տիւնքի նամէտ կաթիլներուն, որոնք
այնքան առատօրէն կը կաթիլին օ-
տար և անարև հորիզոններու տակ,
գործատուն մը մթին և վատառողջ
անկիւններուն մէջ. յոգնած բարակ-
ներու և կեղեքուած մարդկութեան
ըողոքն ու անէ՛ծքը բիւրեղացուցած:

Օրերը չար են, և զոյւթեան
պայքարը սոսկալիս է: Կեանքը՝ անու-
շաթիւն մը ունի գեռ յոյսի մոխրա-
ղէզներուն տակ անթիղուած, և ստոր
համար չէ՞ որ զրմուած սէրերու,
խորտակուած երազներու յուսահատ
մահամերձ հոգին իսկ կ'ուզէ ճնախ
կեանք...

Վերջին անգամ գերմանական ԵՕ-
հաննիթէր Հոսփիթալի վերնայարկի
սենեակներէն մէկուն մէջ գտայ զինք,
արիւն փղծկող թոքախտաւորի մը
անկողնէն մի քիչ անդին:

Ո՞նց տղայ:
Սուրիոյ մշտապայծառ երկինքը մի
քիչ արև, աստղերը մի քիչ մպիտ, և
Լիբանանի պուրակները մի քիչ հո-
վանի գլացած էին իրեն, և նա Ամե-
րիկեան գործարաններու ճամբան էր
ձեռք առած արևելքի գաղթականնե-
րու անվերջ կարաւանին հետ, որոնք
կ'երթան թափառել այն օտար ու ան-
ճանօթ երկինքին տակ, սարին երով
արիւն արցունք քամելէ հաք՝ մի
քանի օսկիի հետ խանդավառած ս-
ուղջութիւն մը և թոքախտը ետ բե-
րելու:
Տառապող մահամերձի անկողնոյն
քով մարդ պահ մը կր մտնայ և հայ-
րենիք և ազգութիւն, ու մաղաքախ-
րական վեհ զգացումներով սոյցուն,

